

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ` ԿՈՆԿՐԵՏ ԴԱՍԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Յ. Յ. ՕՅԱՆՅԱՆ

*Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ԳՊՀ-ի հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս*  
**Ջ. Ա. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ**

*Սարուխանի թիվ 2 միջնակարգ դպրոցի դասվար*

Արդի մանկավարժության մեջ կիրառվում են ուսուցման ավանդական և նոր մեթոդները: Եթե ուսուցման ավանդական մեթոդների գործադրումը միտված է սովորողներին «պատրաստի» գիտելիքներ հաղորդելուն, ապա ժամանակակից մեթոդների օգտագործումը ենթադրում է նրանց ուսումնական գործունեության նորովի կազմակերպում, ուղղորդում գիտելիքների ձեռքբերմանը: Անհրաժեշտ է ուսուցման գործընթացը կազմակերպել այնպես, որ զարգանան աշակերտների տրամաբանական վերլուծության կարողությունները, պետք է ստեղծել այնպիսի խթանիչ դրդապատճառներ /ներգրավիչ մուտք/, որ սովորողներն իրենք կազմակերպեն և իրականացնեն գիտելիքների ձեռքբերման ստեղծագործական գործընթացը:

Ընդգրկվելով խմբային աշխատանքներում` սովորողները հաղորդակցվում են, սովորում ու սովորեցնում միմյանց և ածանցյալ խմբերում կարողանում են հանդես գալ իրենց ձեռքբերումների որոշակի արդյունքների հաղորդմամբ: Աշակերտների շահագրգռվածությունը կարող է խթանվել, եթե խմբերի ուսումնական արդյունքները գնահատվեն մրցակցային հիմունքներով:

Առաջնորդվելով դասի վարման նման ընթացակարգով` ուսուցիչը լրջորեն պետք է նախապատրաստվի յուրաքանչյուր թեմային` ելնելով հետևյալ պահանջներից.

- աշակերտը պետք է`
  - գործնական աշխատանք կատարի դասի ընթացքում,
  - ապավինի ոչ այնքան իր հիշողությանը, որքան ստեղծագործաբար գործելու, աշխատելու կարողությանը,
  - կարողանա իրեն դրսևորել ոչ միայն անհատական, այլև խմբային աշխատանքներում,

- զբաղվի ինքնակրթությամբ, ինքնակատարելագործմամբ և այլն:

Իհարկե, նման մոտեցումը չի կարող լինել արդյունավետ, եթե ուսուցիչը նրբանկատ չլինի սովորողների տարիքային ու անհատական առանձնահատկություններին հաշվառման հարցերում: Թեև ուսուցման մեթոդների ընտրության գործում նա ազատ է, բայց չի կարող կամայական մոտեցում ցուցաբերել: Ուսումնադաստիարակչական հարցերն այնքան բազմաբովանդակ են, որ մեկ մեթոդով /որքան էլ այն արդյունավետ լինի/ հնարավոր չէ տալ դրանց սպառիչ լուծումները: Ահա թե ինչու ուսուցման գործընթացում կարևորվում է բազմաթիվ մեթոդական հնարների զուգակցումը:

- Այդ առումով պետք է ելնել`
- ուսուցման նպատակից ու խնդիրներից,

- սովորողների կրթական աստիճանից,
- թեմայի բովանդակության բարդության աստիճանից,
- սովորողների տարիքային և անհատական առանձնահատկություններից,
- ուսուցման պայմաններից,
- ուսուցչի և աշակերտների հաղորդակցման բնույթից /աշակերտակենտրոն, ուսուցչակենտրոն/,
- ուսուցչի մանկավարժական և մասնագիտական կարողություններից և այլն:

Մասնավորաբար, համագործակցային մեթոդներն աշակերտակենտրոն ուսուցում են ենթադրում՝ սովորողների համար ապահովելով խմբերում աշխատելու լավագույն հնարավորություններ:

Մեր ասելիքը ներկայացնենք մի կոնկրետ դասի օրինակով՝ կազմելով դասի վարման օրվա պլան:

Դասարան՝ Երկրորդ

Ամիս-ամսաթիվը

Առարկան՝ Մայրենի

Դասի տեսակը՝ Նոր թեմայի հաղորդման դաս

**Խթանման փուլ**

Ուսուցիչ – Մենք ի՞նչ սովորեցինք «Տեսնես՝ լա՞վ է, թե՞ վատ» անցած թեմաներից:

Աշակերտներ՝

ա) Լավ անես՝ քեզ կանես, վատ անես՝ քեզ կանես:

բ) Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն:

գ) Ընկեր չունեցող մարդն անթև թռչուն է:

Ուսուցիչ – Իսկ ինչպիսի՞ն պետք է լինի ընկերը:

Աշակերտ – Ընկերը պետք է լինի ազնիվ, բարի, հավատարիմ, որպեսզի ընկերոջը դժվար պահին մենակ չթողնի:

Ուսուցիչ – Նման ընկերներ կա՞ն:

Աշակերտ – Կա՛ն, կարդալով «Ո՞ր մեկս կամաչի» ժողովրդական գրույցը՝ հանոզվել են, որ կարող են լինել ընկերներ, որոնք իրենց ընկերոջը չեն օգնում դժվարին պահին:

Երեխաների խոսքը առավել տպավորիչ կդառնա, եթե նրանք դերեր ստանձնելով՝ բեմականացնեն «Վատ ընկերը» պատմվածքը:

Ուսուցիչ – Ի՞նչ եք կարծում, այս դեպքից հետո տղաների ընկերությունը կպահպանվի՞, թե ոչ:

Աշակերտ – Ո՛չ, չի՛ պահպանվի, որովհետև արջն անօգնական ընկերոջ ականջին շշմջաց, որ այդպիսի ընկերոջ հետ անտառ չպետք է գալ:

Ելնելով այս խթանից մուտքի ընձեռած հնարավորությունից՝ ուսուցիչը կարող է գրույցը շարունակել մեկ այլ համամարդկային արժեքի՝ աշխատասիրության թեմայով, որը կլինի նախապատրաստական աշխատանք նոր դասի հաղորդման համար:

**Քայլ 1:** Ընտրել թեման – «Տղան և մրջյունը»:

**Քայլ 2:** Նպատակի հստակեցում: Խմբերի բաժանում: Անհրաժեշտ պարագաների նախապատրաստում և այլն: Անհրաժեշտ է՝

ա) սովորողների մեջ աշխատանքի հանդեպ դրական վերաբերմունքի մշակում՝ հակադրելով միմյանց աշխատասիրությունն ու ծուլությունը,

բ) ծավալել երկխոսություն՝ խթանելով սովորողների բանավոր խոսքը, հասարակական ակտիվությունը, ինչպես նաև դատողություններ, վերլուծություններ կատարելու կարողությունները և այլն,

գ) հարստացնել կենդանիների, մասնավորապես՝ մրջյունների մասին երեխաների ունեցած գիտելիքները,

դ) բանաստեղծության բովանդակությունը ծառայեցնել սովորողների գիտելիքների հարստացմանը, աշխարհայացքի ձևավորմանը:

### **Միջոցները**

Դասագիրք, գունավոր և կաշուն քղթեր, գունավոր մատիտներ, մկրատ և այլն:

Այնուհետև, շարունակելով ակտիվ երկխոսությունը՝ ուսուցիչը երեխաների ուշադրությունը բևեռում է աշխատանքի ու աշխատասիրության վերաբերյալ բազում ժողովրդական ասացվածքների վրա.

«Աշխատանքը մայրն է ամեն բարիքի»:

«Ով աշխատի, նա կուտի»:

«Աշխատող խոփը կփայլի»:

«Այսօրվա գործը վաղվան չեն թողնի»:

«Ով ալարի, ոչ դալարի» և այլն:

Ուսուցիչ – Միայն մարդիկ են աշխատասեր, իսկ կենդանիները ...

Աշակերտ – Կան կենդանիներ, որոնք շատ աշխատասեր են, օրինակ՝ մեղուները, որոնք ծաղկից մեղր են պատրաստում:

Սահուն անցում կատարելով բուն թեմային՝ ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին բացել դասագրքերը և լուռ ընթերցել «Տղան ու մրջյունը» բանաստեղծությունը: Համագործակցային մեթոդի կիրառության ընթացքում աշակերտները խորանում են ուսումնական նյութի որոշակի հատվածի հիմնախնդիրների բացահայտման հարցերում՝ նախապես բաժանվելով նախընտրելի խմբերում:

Առաջարկում ենք դասասենյակի հետևյալ դասավորությունը՝

Յուրաքանչյուր խումբ պետք է նստի մեկ սեղանի շուրջ:

Կազմվում են 4 հոգուց բաղկացած տարասեռ խմբեր:

### **Դերերը խմբերում**

1. *Ընթերցողներ* – Կարդալ տեքստը, դուրս գրել ածանցավոր բառերը: Գրել այդ բառերի արմատները: Պատասխանել այն հարցին, թե ի՞նչ է սովորեցնում բանաստեղծությունը և այլն:

2. *Բնագետներ* – «Ի՞նչ է, ո՞վ է» մանկական հանրագիտարանից դուրս գրել տեղեկություններ մրջյունների մասին, որոնք կհետաքրքրեն մյուս խմբերին:

3. *Թատերասերներ* – Բեմականացնել «Տղան և մրջյունը» բանաստեղծությունը՝ բովանդակային հարցերը տպավորիչ դարձնելու համար:

4. *Նկարիչներ* – Նկարել աշխատասեր մրջյուններին իրենց պատկերացմամբ և այլն:

**Քայլ 3:** Բացատրել առաջադրանքներն ու համագործակցային նպատակները ըստ խմբերի:

Ուսուցիչը պետք է համոզված լինի, որ բոլորն են ընթրնել իրենց անելիքները, որպեսզի յուրաքանչյուր խմբից պատահականորեն ընտրված մեկ կամ երկու աշակերտներ կարողանան դասարանին ներկայացնել իրենց խմբի կատարած աշխատանքները: Սովորողների ակտիվությունը խթանելու համար կարելի է կիրառել խրախուսանքի զանազան ձևեր ու մեթոդներ, որոնք նախընտրելի են երեխաների համար:

Յուրաքանչյուր սովորող պետք է աշխատի «մեկը բոլորի և բոլորը մեկի համար» հայտնի սկզբունքով:

Կարևորում ենք անհատական հաշվետվության ներկայացումը:

Խմբերից յուրաքանչյուրը պետք է կարողանա դասարանին ներկայացնել իրենց խմբի կատարած աշխատանքներն այնպես, որ այն հասկանալի լինի մյուսներին:

Անհրաժեշտության դեպքում խմբերի անդամներն ուսուցիչից պետք է ստանան օգնություն՝ ամբողջացնելով իրենց գիտելիքներն այս կամ այն հարցի շուրջ:

**Քայլ 4:** Վերհսկում, միջամտում և առաջադրանքների ներկայացում: Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր կատարած աշխատանքը:

Օրինակ՝ ընթերցողները ներկայացնում են իրենց կատարած բառային աշխատանքը, հիմնավորում այն քերականորեն, կարևորում մրջյունի աշխատասիրությունը, որն իր «գործը լավ գիտի».

- Հիմա պիտի աշխատեն,

Որ վայելեն ձմռանը:

Բնագետները, օգտվելով մանկական հանրագիտարանից, տեղեկացնում են, որ մրջյուններն ապրում են խմբերով և նրանցից յուրաքանչյուրն ունի իր պարտականությունը: Մրջյունները նպաստում են հողի հարստացմանը, փխրեցմանը, մաքրում այն փտած բույսերից: Մրջյունն ուժեղ է և կարող է իր քաշից ավել ծանրություն տեղափոխել, աչքի է ընկնում իր աշխատասիրությամբ և այլն:

Այնուհետև ունկնդրող խմբերը հարցեր են առաջադրում իր աշխատանքը ներկայացնող խմբին և ստանում լրացուցիչ բացատրություններ: Նույն կերպ մյուս խմբերը ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները՝ պատահականորեն ընտրված աշակերտների միջոցով:

**Քայլ 5:** Գնահատում

Կատարվում է սովորողների գնահատում թերթիկի միջոցով, որն իր մեջ ներառում է ինչպես խմբերի, այնպես էլ առանձին աշակերտների ձեռքբերումները: Մինչ այդ, ուսուցիչը պայմանավորվում է սովորողների հետ գնահատման չափանիշների մասին՝ տրամադրելով յուրաքանչյուր խմբի հարցերը՝ իրենց պատասխաններով:

Կարելի է ստեղծել նաև դիտորդների խումբ, որը վերլուծում է խմբերի կատարած աշխատանքները՝ գործընթացի հետագա բարելավման նպատակով:

Դասից հետո պետք է վերլուծել և բացահայտել ուսուցման արդյունավետության առումով ունեցած ձեռքբերումներն, ինչպես նաև նկատված բացթողումները, որոնք կարևոր են գործընթացի հետագայի համար:

Առաջադրելի հարցեր՝

- Ավելի լավ ի՞նչ կարելի էր անել:

- Ինչպե՞ս իրականացան դասի նպատակները:

- Ինչու՞ նկատվեցին որոշ բացթողումներ:
- Ինչպե՞ս հաղթահարել դրանք և այլն:

Այս հարցերի պատասխանները կրթադաստիարակչական առումով օգտակար են:

Գործնականում շատ ուսուցիչներ դասը եզրափակում են կշռադատման փուլով՝ օգտվելով քառաբաժան մեթոդից.

Ի՞նչ իմացանք Արջյունները շատ աշխատասեր կենդանիներ են:	Ի՞նչ լսեցինք Արջյունի բարի խորհուրդներն աշխատասիրության ծախին:
Ի՞նչ սովորեցինք Այն, որ աշխատասիրությունը գովելի է, իսկ ծուլությունն՝ անընդունելի ու դատապարտելի:	Ինչպիսի՞ն էր տղան Անհոգ, փոքր, հետաքրքրասեր Ինչպիսի՞ն էր ճրջյունը Աշխատասեր, ժիր, ուժեղ, հեռատես:

Աշակերտների տնային հանձնարարությունը կարող է վերաբերվել բանաստեղծությունը անգիր սովորելուն. տեսրում արտագրություն կամ բառային աշխատանք կատարելուն, արտադասարանային ընթերցանություն հանձնարարելուն և այլն:

**ПРИМЕНЕНИЕ МЕТОДОВ СОТРУДНИЧЕСТВА В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ  
(НА ПРИМЕРЕ КОНКРЕТНОГО УРОКА)**

*Գ. Գ. Оганян  
Ճ. Ա. Авраамյան*

Статья посвящена вопросам применения методов сотрудничества в начальной школе. В качестве примера представлена тема "Мальчик и муравей", в рамках которой группы младших школьников, осуществляя обмен полученными знаниями, умеют посредством самостоятельной работы получать разные сведения о трудолюбивых муравьях.

**THE USE OF COLLABORATIVE METHODS AT PRIMARY SCHOOL /BY A LESSON  
SPECIFIC EXAMPLE/**

*H. H. Ohanyan  
J. A. Abrahamyan*

The article is devoted to the issues of using collaborative /interactive/ teaching methods at primary school. The topic called "The Boy and the Ant" is chosen as a lesson example. Through various types of individual assignments and teamwork activities, and also through exchange of the knowledge acquired, the elementary school children are able to get different information on hardworking ants.